ՀՏԴ 159.9

Հոգեբանություն

Անի ԱՎԱԳՅԱՆ
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Հոգեբանության և մանկավարժության ամբիոնի դասախոս, հոգեբանական գիտությունների թեկնածու
ք.Իջևան, Հայաստանի Հանրապետություն
animavagyan@yahoo.com

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ <<ՀԵՐՈՆՏՈՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ>> ԹԵՄԱՅՈՎ ՏԵՍԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ

Հոդվածում հեղինակն անդրադառնում է <<Զարգացման հոգեբանություն>> առարկայի շրջանակներում <<Հերոնտոհոգեբանություն>> թեմայով ուսումնական տեսագործնական պարապմունքների իրականացման մեթոդիկային: Նշվում է, որ հասարակության զարգացման արդի փուլում զգալիորեն փոխվել է վերաբերմունքը հատկապես ուշ հասունության տարիքում գտնվող անձանց նկատմամբ: Առաջ է քաշվում այն տեսակետը, որ ուշ հասունացման տարիքում գտնվող անձանց նկատմամբ վերաբերմունքի փոփոխության տեսանկյունից չափազանց կարևոր է այն, թե ապագա մասնագետներին ինչ շեշտադրումներով է դասավանդվում <<Հերոնտոհոգեբանություն>> թեման: Հոդվածում սահմանվում են <<Հերոնտոհոգեբանություն>> թեմայի ուսուցման նպատակը, կրթական ելքային արդյունքները, առանձնացվել են <<Հերոնտոհոգեբանություն>> թեմայով տեսագործնական պարապմունքին դասախոսի նախապատրաստման հիմնական փուլերը, ներկայացված են կոնկրետ պարապմունքի պլանավորման և իրականացման հիմնական փուլերը, սովորողներին հանձարարվող ինքնուրույն աշխատանքներին ներկայացվող պահանջները և մեթոդական մի շարք այլ հարցեր: Հեղինակը գալիս է այն եզրակացության, որ ուշ հասունության տարիքի անձանց նկատմամբ երիտասարդ մասնագետների վերաբերմունքը մեծապես կախված է

<<Հորոնտոհոգեբանություն>> առարկայի շրջանակներում կատարված շեշտադրումներից։

Բանալի բառեր՝ հերոնտոհոգեբանություն, ուշ հասունություն, ծերություն, մոտիվացիա, տեսագործնական պարապմունք, դասին նախապատրաստման փուլեր, պարապմունքի իրականացման փուլեր։

A.Avagyan

METHODOLOGICAL APPROACH TO ORGANIZING THEORETICAL AND PRACTICAL TRAININGS ON "HERONTOPSYCHOLOGY" WITHIN THE FRAMEWORK OF DEVELOPMENT PSYCHOLOGY

In the article, the author refers to the methodology of conducting educational theoretical and practical lessons on "Herontopsychology" within the framework of the subject "Developmental Psychology". It is noted that at the current stage of development of society, the attitude towards people, especially those of late adulthood, has changed significantly. It is extremely important what accents the topic of "Herontopsychology" is taught to future professionals. The article defines the purpose of teaching the topic "Herontopsychology", and the educational outcomes. The main stages of the lecturer's preparation for the theoretical and practical lesson on "Herontopsychology" were separated, the main stages of planning and implementation of a specific lesson are presented, and a number of other methodological issues. The author concludes that the attitude of young professionals towards people of late adulthood largely depends on the emphasis placed on the subject of "Horontopsychology".

Ключевые слова: herontopsychology, late maturity, old age, motivation, theoretical and practical trainings, stages of lesson preparation, stages of training.

А. Авагян

МЕТОДИЧЕСКИЙ ПОДХОД К ОРГАНИЗАЦИИ ТЕОРЕТИКО-ПРАКТИЧЕСКИХ ЗАНЯТИЙ ПО «ГЕРОНТОПСИХОЛОГИИ» ПО ПРЕДМЕТУ «ПСИХОЛОГИЯ РАЗВИТИЯ»

В статье автор пишет о методике проведения учебно-практических занятий по <<Геронтопсихологии>> в рамках <<Психологии развития>>. Отмечается, что на современном этапе развития общества отношение к людям, особенно позднему взрослому возрасту, существенно изменилось. Выдвигается гипотеза, что с точки зрения изменения отношения к людям позднего взросления чрезвычайно важно, на что делается акцент в теме <<Геронтопсихология>>. В статье определяется цель преподавания темы <<Геронтопсихология>> и образовательные результаты, были выделены основные этапы подготовки преподавателя к теоретико-практическим занятиям по <<Геронтопсихологии>>, представлены основные этапы планирования и проведения конкретного урока, требования к самостоятельной работе и ряд других методических вопросов.

Автор приходит к выводу, что отношение молодых специалистов к людям позднего взросления во многом зависит от того, какой акцент делается на предмете <<Геронтопсихология>>.
Key words: геронтопсихология, поздняя зрелость, старость, мотивация, теоретико-практическое занятие, этапы подготовки к уроку, этапы обучения.

Ժամանակակից հասարակությանը ներկայացվող մարտահրավերներին զուգընթաց՝ առանձնահատուկ նշանակություն է ստանում ընդհանրապես հասարակության և հասարակության առանձին անդամների վերաբերմունքը ուշ հասունության տարիքում գտնվող անձանց նկատմամբ: Ըստ մեզ, խնդիրը առանձնահատուկ կարևորություն է ստացել հատկապես աշխարհում կորոնավիրուսային (COVID 19) համավարակի տարածման և Արցախյան քառասունչորսօրյա պատերազմի ֆոնին: Մի կողմից համավարակի ընթացքում անընդհատ ընդգծվում է, որ կորոնավիրուսային վարակը առավել վտանգավոր է հատկապես ուշ հասունության տարիքում գտնվող անձանց համար, մյուս կողմից որպես մխիթարիչ հանգամանք է դիտվում այն, որ COVID 19-ով վարակման դեպքում առավել երիտասարդ տարիքի անձանց մահացության տոկոսը ցածր է: Ստացվում է, որ աստիճանաբար այնպիսի մոտեցում է ձևավորվում, որ եթե ուշ հասունության տարիքում գտնվող մարդ է մահանում, ապա հասարակության մակարդակում (խոսքը հասարակության մասին է, քանի որ անհատական մակարդակում յուրաքանչյուր մարդ իր կորուստը, վիշտը յուրովի է ապրում՝ անկախ մահացած հարազատի տարիքից) դա համեմտաբար առավել տանելի է և այնքան ցավալի չէ:

Այս ամենին գումարվեց նաև Արցախյան քառասունչորսօրյա պատերազմի անասելի ցավը, երբ հազարավոր զոհված երիտասարդների կորստի ֆոնին, ուշ հասունության տարիքում գտնվող անձանց կորուստը կարծես արժեզրկվել է, և շատ հաճախ կարող ենք լսել, որ <<մարդն արդեն իրենն ապրել էր>>, <<թող բոլորն էլ այդ տարիքում մահանան>> և նմանատիպ այլ արտահայտություններ:

<<ՈՒշ հասունության տարիքը հաճախ անվանում են նաև ծերացման տարիք: Հետազոտողների մեծ մասը գտնում է, որ այս տարիքն անձի մոտ սկսվում է 60 տարեկանից>>[1]: Տարիքի հոգեբանական առանձնահատկություններով զբաղվում է հերոնտոհոգեբանությունը: Իհարկե, <<այս տարիքի հիմնական առանձնահատկություններից մեկը ծերացման պրոցեսն է, որն օրգանիզմում տեղի ունեցող որոշակի տարիքային փոփոխություններով ուղեկցվող, ժառանգաբար պլանավորված գործընթաց է>>[2]:

Այնուամենայնիվ, մենք գտնում ենք, որ ուշ հասունության տարիքի մարդկանց պոտենցիալը պետք է առանձնահատուկ կարևորվի, քանի որ այս

---

[1] *"Психология человека от рождения до смерти" Коллектив авторов. Под общей редакцией **А. А. Реана**, ООО «Издательство АСТ», М., 2015, стр. 495*

[2] *"Психология человека от рождения до смерти" Коллектив авторов. Под общей редакцией **А. А. Реана**, ООО «Издательство АСТ», М., 2015, стр. 496*

տարիքի մարդիկ հասարակության համեմատաբար առավել փորձառու խավն են, մյուս կողմից, այս տարիքի մարդկանցից շատերը իրենց ֆիզիկական տարիքն առանձնապես չեն զգում, լի են մտահղացումներով և դրանք իրականություն դարձնելու բավարար ներուժով: Պատահական չէ, որ արտասահմանյան ժամանակակից հետազոտողներից շատերը բավականին մեծ ուշադրություն են դարձնում ուշ հասունության և ծերության տարիքում գտնվող մարդկանց մտածողության առանձնահատկությունների ուսումնասիրմանը: <<Այսօր հետազոտողներից շատերի մոտ կասկած չի հարուցում այն փաստը, որ չնայած հիշողության առավելություններին, երիտասարդները մտածողության որոշակի ոլորտներում զիջում են ուշ հասունության տարիքում գտնվող անձանց և դա ակնհայտ է հատկապես իմաստության դրսևորման մեջ>>[1]:

Բնական է, որ ուշ հասունության տարիքում գտնվող մարդիկ իրենց ծերացման, կենսաթոշակային տարիքի հասնելու, սոցիալական որոշ դիրքեր զիջելու հանգամանքին տարբեր կերպ են վերաբերվում, սակայն ակնհայտ է մի բան, որ նրանցից շատերը դեռևս շարունակում են բավականին մեծ պոտեցիալ ունենալ և պատրաստակամ են իրենց ներուժը ներդնել այն ոլորտներում, որտեղ բավականաչափ բանիմաց են և կարող են մեծապես օգտակար լինել: Նրանցից շատերը, կենսաթոշակի անցնելուն զուգընթաց, աշխատելու կամ շրջապատին որևէ այլ կերպ օգտակար լինելու մեծ ցանկություն ունեն:

Մեր կարծիքով, հասարակության մեջ ուշ հասունության տարիքում գտնվող անձանց նկատմամբ վերաբերմունքի և նրանց ներուժի օգտագործման, արժևորման տեսանկյունից առանձնահատուկ կարևորություն է ստանում բարձնագույն ուսումնական հաստատությունների ուսումնական ծրագրերում <<Զարգացման հոգեբանություն>> ուսումնական առարկայի շրջանակներում <<Հերոնտոհոգեբանություն>> թեմայով տեսագործնական պարապմունքների կազմակերպման նկատմամբ մեթոդական մոտեցումը, քանի որ ուշ հասունության տարիքի մարդկանց նկատմամբ վերաբերմունքը, նրանց ունեցած ներուժի օգտագործման հնարավորությունների դիտարկումը, մեծապես կարող է կախված լինել այս տարիքի նկատմամբ երիտասարդ մասնագետների մոտեցումից, նրանց աշխարհայացքից, ուշ հասունության տարիքում գտնվող անձանց պոտենցիալ հնարավորությունների գնահատման դիտակետից:

<<Զարգացման հոգեբանություն>> առարկայի շրջանակներում <<Հերոնտոհոգեբանություն>> թեմայի ուսուցումը գիտական համապատասխան ոլորտի դիդակտիկ արտացոլումն է, սակայն <<ուսումնական առարկան ներառում է ինչպես ուսումնասիրվող գիտական ոլորտի վերաբերյալ գիտելիքներ, որոնք կուտակված են գիտության տարբեր բնագավառներում, այնպես էլ արդյունավետ դասավանդման ձևեր, հետևաբար

[1] *"Психология человека от рождения до смерти" Коллектив авторов. Под общей редакцией* ***А. А. Реана,*** *ООО «Издательство АСТ», М., 2015, стр. 502*

բովանդակությամբ այն ավելի լայն հասկացություն է, քան գիտական դիսցիպլինը>>[1]:

<<Զարգացման հոգեբանություն>> առարկայի շրջանակներում <<Հերոնտոհոգեբանություն>> թեմայի ուսուցման նպատակն է սովորողներին ապահովել ուշ հասունության և ծերության բովանդակությունը կազմող համապատասխան գիտելիքներով, կարողություններով և հմտություններով, ընդլայնել ուսանողների մասնագիտական առարկայական ոլորտին սերտ առնչվող հոգեբանական գիտելիքների շրջանակը, նպաստել ուսանողների մոտ աշխատանքային կոմպետենցիաների ձևավորմանը:

Ըստ մեզ, թեմայի ուսուցման ավարտին ուսանողը պետք է արձանագրի կրթական ելքային հետևյալ արդյունքները.

- ուսումնամանկավարժական գործունեության մեջ հոգեբանական գիտելիքը կիրառելու կարողություն,
- ուշ հասունության և ծերության տարիքում գտնվող անձի հոգեբանական բնութագիրը կազմելու, նրա անձը հոգեբանական մեթոդներով հետազոտելու կարողություն,
- համապատասխան տարիքի անձանց կոլեկտիվի հոգեբանության, միջանձնային հարաբերությունների ոչ բարդ հետազոտություններ անելու ընդունակություններ,
- ուշ հասունության տարիքում գտնվող անձանց մոտ գործունեության տարբեր ձևերի նկատմամբ ներքին մոտիվացիա ձևավորելու և մարդկանց մտահոգացումները, նախաձեռնությունները խրախուսելու կարողություն:

Թեմայի ուսուցման ավարտին ուսանողը կիմանա՝

- Ուշ հասունության և ծերության տարիքում գտնվող անձի հոգեկանի զարգացման և անձի դրսևորման հիմնական օրենքներն ու օրինաչափությունները,
- Ուշ հասունության և ծերության տարիքում գտնվող անձի հոգեկան զարգացման հիմնական հիմնահարցերն ու տեսությունները:

Թեմայի ուսուցման ավարտին ուսանողը ունակ կլինի՝

- ուսումնական գործընթացում և հետագա աշխատանքային պրակտիկայում տեղին և ըստ նշանակության կիրառել ուշ հասունության և ծերության տարիքի վերաբերյալ ստացած հոգեբանական գիտելիքները,
- հետազոտել ուշ հասունության և ծերության տարիքի մարդկանց անձի, իմացական և հուզակամային, դրդապատճառային ոլորտի առանձնահատկությունները, դրա համապատասխանությունը հոգեկան զարգացման տարիքային նորմատիվներին,
- Բացահայտել հոգեկան զարգացման դժվարությունները, տարիքով պայմանավորված փոփոխություններն ու ի հայտ եկած խնդիրները, որի հիման

[1] ***Գևորգյան Ս., Վարդանյան Կ., Դալլաքյան Ա.*** *<<Հոգեբանության դասավանդման մեթոդիկա>>, ՈՒսումնամեթոդական ձեռնարկ, <<Զանգակ-97>> հրատարակչություն, Երևան, 2011, էջ26.*

վրա հնարավոր կդառնա նմանատիպ անձանց հոգեբանական ճիշտ աջակցության և ուղեկցման կազմակերպումը:

- Հոգեբանական մեթոդների կիրառությամբ իրականացնել հոգեբանական ոչ շատ բարդ, փոքրածավալ հետազոտություններ:

Բարձրագույն ուսումնական հաստատությունում <<Հերոնտոհոգե-բանություն>> թեմայով տեսագործնական պարապմունքին դասախոսի նախապատրաստական աշխատանքները ընթանում են որոշակի հաջորդական փուլերով:

Պարապմունքի նախապատրաստման առաջին փուլը այս թեմայով նախատեսվող բոլոր պարապմունքների թեմաների որոշակիացումն է: Հերոնտոհոգեբանությանը հատկացված ժամերը կառուցվում են տեսական նյութի ուսումնասիրման, գործնական առաջադրանքների կատարման և թեմայի շրջանակներում վերջնարդյունքի գնահատման սկզբունքով:

Երկրորդ փուլը թեմայի վերաբերյալ գիտամեթոդական գրականության ուսումնասիրումն է: Պետք է առանձնացնել այն աղբյուրները, որոնք ուսումնասիրվելու են դասախոսությունների և գործնական պարապմունքների ընթացքում:

Երրորդ փուլը դասախոսական և գործնական նյութի նախապատրաստումն է կիրառության: Այս փուլի կարևոր խնդիրներից է դասախոսի կողմից դասավանդման սեփական մակարդակի և ուսանողների զարգացածության մակարդակի ռեֆլեքսիան, ուսանողների զարգացածության մակարդակի համադրումը մատուցման համար նախատեսվող նյութի բարդության աստիճանի և որակի հետ[1]:

Չորրորդ փուլում իրականացվում է մեթոդական օժանդակ նյութերի՝ աղյուսակներ, նկարներ, տեսասահիկ, նախապատրաստումը, տեսաֆիլմի և այլ ցուցադրական նյութերի ընտրությունը, անհրաժեշտության դեպքում փորձարարական մասի նախապատրաստումը, կիրառվելիք թեստային և այլ մեթոդիկաների ընտրությունը և նախապատրաստումը[2]:

Հինգերորդ փուլում իրականացվում է կոնկրետ դասի պլանի մշակումը: Այս փուլի պլանավորման ընթացքում պետք է հաշվի առնել սովորողների անհատական առանձնահատկությունները, նրանց առաջադիմությունը, առարկայի և հատկապես թեմայի նկատմամբ սովորողների հետաքրքրության դրսևորման մակարդակը, առաջարկվող մեթոդիկաների հետ աշխատելու հմտությունները, աշխատանքի տեմպը և այլն: Դասախոսը պետք է հաշվի առնի նաև իր դասավանդման ոճը, ուսումնական նյութի մատուցման որակը, տեխնիկական սարքերի առկայությունը և դրանցից օգտվելու հմտությունները,

---

[1] ***Самородский П.С., Симоненко В.Д.*** *Методика профессионального обучения: Учебно-методическое пособие для преподавателя специальности "Профессиональное обучение" / Под ред.* ***В. Д. Симоненко*** *- Брянск: Издательство БГУ, 2009. - С. 22.*

[2] ***Эрганова Н.Е.*** *Методика профессионального обучения учеб. пособие для студентов вузов /* ***Н. Е.Эрганова****. - 2-е изд. стереотип. - М.: Академия, 2008. - С. 34.*

սովորողների ճանաչողական հետաքրքրությունները կառավարելու կարողությունը և այլն:

Հաճախ առավել նպատակահարմար է իրականացնել խառը տիպի պարապմունքներ, որոնք ներառում են ինչպես տեսական, այնպես էլ գործնական տարրեր. տեսական գիտելիքների յուրացում, հասկացում և ընդհանրացում, ստացած տեսական գիտելիքների ամրապնդում և համակարգում, ստացած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները գործնականում կիրառելու հմտության ձևավորում, այնպիսի ինտելեկտուալ հմտությունների զարգացում, ինչպիսիք են վերլուծությունը, համադրությունը, մակածումը, արտածումը և այլն:

Կարևոր է նաև դասապրոցեսի ընթացքում սովորողների մոտ այնպիսի մասնագիտական նշանակալի որակների ձևավորումը, ինչպիսիք են պատասխանատվությունը, ստեղծագործականությունը, նախաձեռնողականությունը, ճշտապահությունը, ինքնուրույնությունը և այլն:

Մեր կարծիքով, հերոնտոհոգեբանության շրջանակներում թեմայի ընտրության և դրա բովանդակության մշակման ընթացքում դասախոսը պետք է առաջնորդվի սովորողների տեսական գիտելիքների առկա մակարդակով, հաշվի առնի մասնագիտական հմտությունների այն ամբողջությունը, որը պետք է սովորողների մոտ ձևավորված լինի տվյալ առարկայի ուսումնասիրության արդյունքում, ինչպես նաև միջառարկայական կապերի ընկալման ու վերլուծման կարողության զարգացածության մակարդակով, որոնք սովորողին հնարավորություն կտան դիտումներ իրականացնել, բացահայտել երևույթների միջև առկա կապերը, համեմատել երևույթները, վերլուծել դրանք և այլն: Իրականացվող աշխատանքների ամբողջական բովանդակությունը հիմնվում է մասնագետին ներկայացվող մասնագիտական պահանջների վրա, որոնք արտացոլվում են բարձրագույն ուսումնական հաստատության համապատասխան ծրագրում:

Կոնկրետ պարապմունքը պլանավորվում և իրականացվում է հետևյալ փուլերով.

- թեմայի ընտրություն և աշխատանքի նպատակի ձևակերպում,
- տեսական գիտելիքների մատուցում,
- գործնական մասի իրականացման համար անհրաժեշտ տեսական գիտելիքների վերհանում,
- գործնական մասի իրականացում,
- ստացված արդյունքների համակարգում և ընդհանրացում՝ աղյուսակների, գրաֆիկների և այլնի տեսքով,
- պարապմունքի ամփոփում, վերջնարդյունքների ընդհանրացում:

Նոր նյութի ուսուցման ընթացքում կարևոր է նաև զուգահեռ տարվող այլ առարկաների հետ առկա կապերի բացահայտումն ու նոր նյութի հետազոտման, սովորողների մոտ նոր գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձևավորման ընթացքում այդ կապերի օգտագործումը:

Գիտելիքների որակական և քանակական աճին զուգընթաց՝ սովորողների ինքնուրույնության նկատմամբ ավելի մեծ պահանջներ են դրվում[1]: Այս տեսանկյունից կարևոր է ուսանողների ինքնուրույն աշխատանքների ձևի, ծավալների և թեմաների նախնական ընտրությունն ու պլանավորումը: *Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Շատ կարևոր է նաև սովորողի ակադեմիական ազնվությունը, ըստ որի ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում սովորողը պարտավոր է նշել աղբյուրը՝ ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:*

Դասապրոցեսի ընթացքում նաև սովորողների ձեռք բերած գիտելիքների գնահատում է իրականացվում, ինչը ենթադրում է կոնկրետ դասի կամ տվյալ բաժնի վերաբերյալ իրականացված դասերի արդյունքների վերջնարդյունքների ստուգման, գնահատման ձևերի մշակում:

Սովորողներին, որպես կանոն, դասընթացի սկզբում տրամադրվում է ուսուցանվող առարկայի նկարագիրը և թեմատիկ տրոհումը որտեղ պետք է արտացոլված լինեն առարկայի նպատակը, կրթական ելքային արդյունքները, կրթական ծրագրի վերջնարդյունքները, հիմնական և լրացուցիչ գրականությունը, գնահատման չափանիշներն ու սանդղակները, առարկայի վերջնարդյունքների ստուգման ձևերը:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, հ.գ.թ. Վ.Բ.Յարամիշյանը:

[1] *Основные этапы планирования урока, подготовки к нему учителя и написание методического плана урока* ***Виленский М., Образцов П., Уман Н****. Технологии профессионально-ориентированного обучения в высшей школе. – М.: Педагогическое общество России, 2009. – С. 91*